Funded by UK Government

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

UNDP

Սոցիալական պատմություն

«ԻՄ ԾՆՈՂՆԵՐՆ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՎԵԼ ԵՆ»

Ամուսնալուծությունը բերում է բազմաթիվ փոփոխություններ և մեծ հույզեր ինչպես ծնողների, այնպես էլ նրանց երեխաների համար, երեխան կարող է հարցեր ունենալ այն մասին, թե ինչու են իր ծնողներն ամուսնալուծվում, որտեղ կամ ծնողներից ում հետ է ինքն ապրելու, երբ կարող է տեսակցել ծնողներից մեկին, որտեղ և երբ է քնելու, և այլն:

Այս սոցիալական պատմությունը կօգնի հոգեբաններին (աջակցող մասնագետներին, ծնողներին) նվազեցնել երեխայի անհանգստությունը ծնողների ամուսնալուծության հետ կապված, ինչպես նաև շատ պարզ և մատչելի ձևով բացատրել երեխային իր հետ կամ իր կյանքում տեղի ունեցող կամ սպասվող փոփոխությունները:

Ծնողների ամուսնալուծության փաստը երեխաներին բացատրելը հեշտ չէ, առավել ևս եթե խոսքը գնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին: Երեխաները կարող են տարբեր կերպ վերապրել սոցիալական պատմությունները՝ կախված իրենց հնարավորություններից: Օրինակ, եթե երեխաները չեն կարդում, կարող եք կարդալ նրանց համար կամ ձայնագրել պատմությունը և միացնել այն՝ երեխայի կարդալուն զուգահեռ (նկարներով, սիմվոլներով):

Այս պատմությունը որպես լրացուցիչ աշխատանքային նյութ հատկապես կիրառելի կլինի աուտիստիկ սպեկտրի խանգարումներ կամ զարգացման այլ խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքում, քանի որ պատմությունը պարզեցնում է այն մասերը, որոնք երեխաների համար դժվար ըմբռնելի են, և նախապատրաստում է նրանց սպասվող իրավիճակներին՝ դարձնելով դրանք ավելի քիչ ճնշող:

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP
Armenian Association of Child and Educational Psychologists

Funded by UK Government

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

UNDP

Սոցիալական պատմություն

«ԻՄ ԾՆՈՂՆԵՐՆ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՎԵԼ ԵՆ»

1



Իմ մայրիկն ու հայրիկը սիրում են ինձ:

2

Մայրիկիս ու հայրիկիս համար դժվար է ապրել նույն տանը: Նրանք ամուսնալուծվել են:

3

Մայրիկս ապրում է մի տանը: Երբեմն ես ապրում եմ նրա հետ:

4

Հայրիկս ապրում է մեկ այլ տանը: Երբեմն ես ապրում եմ նրա հետ:

5

Կլինեն պահեր, երբ ես կկարոտեմ մայրիկիս:

6



Կլինեն պահեր, երբ ես կկարոտեմ հայրիկիս:

7

Երբեմն ես տխուր կամ անտրամադիր կլինեմ: Տխուր լինելը կամ տրամադրություն չունենալը նորմալ է:

8

Շուտով ես նորից երջանիկ կլինեմ:

9

Հիմա ես երկու տուն ունեմ:

10

Ես կարող եմ զվարճանալ երկու տանը:

11



Մայրիկս և հայրիկս՝ երկուսն էլ սիրում են ինձ:

12

Ամեն ինչ լավ կլինի:

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP
Armenian Association of Child and Educational Psychologists